

**ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԼԵՂԱՑԻՈՅ
ՏԱՊԱՆԱԳԻՐԸ**

«Հանդէս Ամսօրեալոյի 1912 տարւոյ համարներուն մէջ հանդիպեցայ Ստեփանոս վրդ. Լեհացւոյ տապանագրին, առառուած Շահնախթաւնեանի լնդօրինակութենէն (Ստարգրութիւն էջմիածնի, Ա., 272), համեմատելի Ալիլանի հրատարակածին հետ (Ալյարտատ, էջ 241):

Հ. Ա. Ակրնեան տապանագրին եօթներորդ տպորին մէջ տպուած Կ թուագրիր անհնալորին գանիւով կը սրբագրէ զայն և կը կարդայ ՚, ինչ որ ուղիւ կը համապատասխանէ հրն յիշատակագրի մը կողմէ Ստեփանոս վրդ. ի մահուան համար նշանակուած ԽՃԱԾ թուականին (Հանդ. Ամս., 1912, էջ 64):

Կ. Յ. Բասմաջեան, ի Ս. էջմիածին իր առաջին գիտական ուղկորութեան միջոցին, անձամբ նորէն լնդօրինակած է Լեհացւոյ տապանագրիը՝ որ քանի մը տեղ կը տարբերի Շահնախթունեանի օրինակութենէն, Բասմաջեան ալ ինդրոյ տարբայ թուագրիր կը կարդայ Կ (Հանդ. Ամս., 1912, էջ 424):

Մենք աչքի առջն ունենալով յիշեալ երկու լնդօրինակութիւնները, կ'առաջարկնենք վերականգնել այդ տապանագրին բնագրիը այսպէս.

Յալլամ զբի անիւս եղեալ պահի
Մարմին մահոււ վարդապետի
Աստուածաբան Ստեփանոսի
Ու եւ տեղեաւ բնիկ Լեհացի
Անիւն ի գուրս այս ընկրկի
Հազար հարիւր լնդ երեսնի
Կրկին բառիւր քիւ հայկազնի
Ուշ հանդիպի տու զողորդի
Աստուած եւ ծեղ ողորմեսի:

Մեր առաջարկած ուղղութեարին են հետեւալները.

ա. տող

Յարկ	եղեալ պահի (Շահնախ.)
Յարկ	(յայս)	"	" (Ալիլան)
Յարկ	[իս յայսալիկ]	"	" (Ակրնեան)
Յալլամ	կրիս նուս	"	" (Բասմաջ.)

Նկատելով որ Բասմաջեանի ընթերցումը բոլորովին անիմաստ է, և նախորդներն ալ այդ անիմաստ թուող գրերը գուրս թողած են սրեւ պատճեռով, մենք կը փորձենք այդ գրերուն գոյութիւնը արդարացնել և կարգալ:

Յալլամ զբի անիւս եղեալ պահի

Կամեմատէ Ե. տողի անիւս ի գուրս բացատրութիւնը, որ իր կարգին առնուած է Ժողովովի գրքէն — ԺԲ. 6 — «Մինչեւ իցէ . . . ընկրկեալ անիւս ի գուրն»: Տապանագրին մէջ սպրդած այս սխալը թերեւ վերագրելի է փորագրիչին:

է. տող

Կրկին բառիւր Կ իւ հայկազնի (Շահնախ.)	"	"	"	"	"	"	"	"	"	"	"
"	"	"	"	"	"	"	"	"	"	"	"
"	"	"	"	"	"	"	"	"	"	"	"
"	"	"	"	"	"	"	"	"	"	"	"

(Ալիլան)

(Ակրնեան)

(Բասմաջեան)

Կրկին բառիւր քիւ հայկազնի

պէտք է կարդալ: Երկրորդ բառին առաջին գիրը — Թ — կարդացուած է Բ, թերեւ փորագրիչին կողմէ: Ակրնեանի սրբագրութեամբ Կի տեղ ՚ կը կարդանք բայց կցելով նախորդ բառին և կ'ունենանք Լեհացւոյ մահուած հայկական տարեթիւնը՝ այսպէս. $1130 + 2 \times 4 = 1138 = \text{ԽՃԱԾ}$:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

